Հայաստանի Հանրապետություն էկոնոմիկայի նախարարություն

ՃՇԳՐԻՏ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ/ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Գործողությունների ծրագիր 2012-2015թթ.

Հաստատված՝
2013թ. դեկտեմբերի 6-ին կայացած ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին

Ներածություն

Սույն Գործողությունների ծրագիրը բխում է ՀՀ կառավարության N 49 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունից: Ներկայացված գործողությունների ծրագիրը սահմանում է արդյունաբերական ռազմավարության իրականացման 4-ամյա ծրագիր 2012-2015 թթ. ժամանակահատվածում:

Գործողությունների ծրագիրը ներկայացված է 3 մակարդակով՝ ռազմավարական ուղղությունների, ռազմավարական նախաձեռնությունների և գործողությունների: Գործողությունները խմբավորված են ըստ ռազմավարական նախաձեռնությունների, վերջիններս իրենց հերթին պատկանում են սահմանված ռազմավարական ուղղություններից մեկին:

Սույն գործողությունների ծրագրի շրջանակներում ռազմավարական ուղղություններն են՝

1. Անդրազգային կորպորացիաների (ԱԱԿ) ներգրավում

2. Նորարարության աջակցություն

3. Ներդրումների և արտահանման ֆինանսական աջակցություն

4. Կարողությունների զարգացում

5. Վաճառքների խթանում

6. Արտաքին տնտեսական գործունեության իրավական դաշտի բարելավում

Յուրաքանչյուր տարվա վերջում ոլորտային խորհուրդը կհաստատի Գործողությունների ծրագիրը՝ հաջորդ երեք տարիների համար:

Վերապահումներ

1. Սույն Գործողությունների ծրագրում պետության կողմից համաֆինանսավորվող գործողությունների իրականացման նախապայման է մասնավոր հատվածի ֆինանսավորումը:

2. Սույն Գործողությունների ծրագրում ընդգրկված են նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագրով» (ԱՄՆ ՄԶԳ «EDMC ծրագիր») պլանավորված գործողությունները Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտում, որոնցից յուրաքանչյուրի իրականացումը ենթակա է պարտադիր հաստատման ԱՄՆ ՄԶԳ կողմից:

3. Ծրագիրը ներառում է «Հայաստանի էլ. հասարակությունը և նորարարությունը մրցունակության խթանման համար» ՀԲ կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակում (այսուհետ՝ ՀԲ ծրագիր) իրականացվող այն գործողությունները, որոնք անմիջապես առնչվում են ճարտարագիտության ոլորտի զարգացման ռազմավարական ուղղությունների հետ: ՀԲ ծրագրի հիմնական նպատակներից է գիտելիքահենք և տեխնոլոգիատար ոլորտների զարգացումը՝ նորարարության աջակցության ենթակառուցվածքի և գործիքակազմի ձևավորման միջոցով: Ծրագրի գործողությունները ներառում են ոլորտների ավելի լայն շրջանակ (տեղեկատվական տեխնոլոգիաներ, էլեկտրոնային հասարակություն և այլն):

Համառոտագիր

ՌՈՒ 1. ԱԱԿ-ՆԵՐԻ* ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

(ՌՈՒ)

(ՌՆ)

1.1. Ազատ տնտեսական գոտիների հիմնում և օտարերկրյա ներդրումների ներգրավում

1.2. ԱԱԿ-ների ներգրավում

1.3. ԱԱԿ-ների հետ տեղական ընկերությունների համագործակցության խթանում

ՌՈՒ 2. ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2.1. Նորարարական բիզնես նախագծերի բացահայտում

2.2. Նորարարության համագործակցության դրամաշնորհներ

2.3. Վենչուրային ֆինանսավորում

2.4. Մտավոր սեփականության պաշտպանության համակարգի բարելավում

ՌՈՒ 3. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

3.1. Ներդրումային ծրագրերի ֆինանսավորում

3.2. Արտահանման ֆինանսավորում

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Անդրազգային կորպորացիաներ:

Համառոտագիր

ՌՈՒ 4. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

4.1. Ճարտարագիտական լաբորատորիաների ստեղծման աջակցության ծրագիր

4.2. Տեխնոլոգիական սկսնակ ընկերությունների բիզնես ինկուբացիոն կենտրոնի հիմնման ծրագրի մշակում

4.3. Տեխնոլոգիական կենտրոնների հիմնում մարզերում (Գյումրի, Վանաձոր)

4.4. Ճարտարագիտության ոլորտում մասնագետների ցանցի (ԱրմԵՆ) ստեղծում

4.5. «ArmRobotics» ծրագրի իրականացում

ՌՈՒ 5. ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

5.1. Գործարար կապերի հաստատման աջակցություն

5.2. Մասնագիտացված միջազգային ցուցահանդեսների մասնակցության աջակցություն

5.3. Տեղական շուկայում վաճառքների խթանում

5.4.Հայկական արտադրանքի միջազգային հավաստագրման աջակցություն

ՌՈՒ 6. ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

6.1. Ոլորտին առնչվող իրավական դաշտի կատարելագործում

6.2. Երկակի նշանակության ապրանքների արտաքին առևտրի կանոնակարգման բեռի թեթևացում

Ոլորտի սահմանում

Սույն փաստաթղթի շրջանակում ճարտարագիտության ոլորտը ներառում է միջազգայնորեն մրցունակ ապրանքներ արտադրելու պոտենցիալ ունեցող ընկերությունները հետևյալ ոլորտներից.

- համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն (26*),
- էլեկտրական սարքավորանքի արտադրություն (27)
- մեքենաների և սարքավորանքի արտադրություն (28)

Այն ներառում է նաև Ճարտարագիտական գործունեություն և դրա հետ կապված տեխնիկական խորհրդատվություններ (71.12) ոլորտը:

Ակնկալվում է, որ ռազմավարության իրականացման առաջին փուլում կձևավորվեն/կառանձնանան մրցակցային առավելություններ ունեցող ենթաոլորտներ, որոնց հետագա զարգացման համար կմշակվեն և կիրագործվեն առանձին ռազմավարություններ:

* Փակագծում նշված է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի 2-րդ խմբագրության (ՏԳՏՀԴ Խմբ.2) համապատասխան կոդը:

ՌՈՒ 1.

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

ՌՈՒ 1. ԱԱԿ-ՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 1.1. Ազատ տնտեսական գոտիների հիմնում և օտարերկրյա ներդրումների ներգրավում	Օտարերկրյա ընկերությունների արտադրական, թեստավորման, փաթեթավորման կամ հետազոտությունների և մշակումների գործունեությունների ներգրավում Հայաստան

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր*	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
1.1.1. «ՌԱՕ Մարս» գործարանի տարածքում «Մալաթիա» և նախկին «Մերգելյան» ինստիտուտի տարածքում «Արաբկիր» գիտահետազոտական կենտրոն ազատ տնտեսական գոտիների ստեղծում և գործարկում - Ֆիզիկական ենթակառուցվածքի պատրաստում - ԱՏԳ-ի պոտենցիալ ընկերությունների հետ բանակցությունների վարում - ԱՏԳ օտարերկրյա ներդրումների ներգրավում	ԱՏԳ օպերատոր՝ «Սիտրոնիքս Արմենիա» ՓԲԸ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,	ԱՏԳ օպերատոր ՀՀ պետական բյուջե	ԱՏԳ պահանջներին համապատասխան ենթակառուցվածքի ձևավորում՝ 2013թ. մարտ Բանակցություններ օտարերկրյա ընկերությունների հետ և ներդրումների ներգրավում՝ 2013-2015թթ.	Համապատասխան արտադրական և գրասենյակային տարածքներ և անհրաժեշտ ենթակառուցվածք ԱՏԳ-ի տարածքներում՝ **«Մալաթիա» ԱՏԳ** 55.8 հզ. ք.մ. արտադրական տարածք 10.9 հզ. ք.մ. գրասենյակային տարածք **«Արաբկիր» ԱՏԳ** 27 հզ. ք.մ. գրասենյակային տարածք ԱՏԳ-ում գործող օտարերկրյա ընկերություններ

* Սույն գործողություններն արդեն ներառված են և հաստատված Դեղագործության և բիոտեխնոլոգիաների գործողությունների ծրագրում և, կրկնահաշվարկի բացառման նպատակով, ֆինանսավորման բյուջեն չի ներառվել սույն գործողությունների ծրագրում:

ՌՈՒ 1. ԱԱԿ-ՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 1.2. ԱԱԿ-ների ներգրավում	3 տարիների ընթացքում 2-3 ԱԱԿ-ների ներգրավում, որոնք կիրականացնեն արտադրական կամ հետազոտությունների և մշակումների գործունեություն Հայաստանում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ Ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
1.2.1. ԱԱԿ-ների նույնականացում. ընտրության սկզբունքների որոշում և 100 ընկերությունների ընտրություն ** Այդ ընկերությունների հետ հաղորդակցման և բանակցությունների վարման գործողությունների իրականացում (ԱԱԿ-ների հետ կապերի հաստատման համար կօգտագործվի Սփյուռքի ներկայացուցիչների տվյալների բազան, Դեղագործության և բիոտեխնոլոգիաների գործողությունների ծրագիր, գործողություն 5.1.1)	ԶՀԳ	ՀՀ պետ. բյուջե*	Վերջնաժամկետ՝ 2013թ. մայիս	ԱԱԿ-ների ցանկ (շուրջ 100 ընկերություններ)
1.2.2. Նպատակաուղղված առաքելությունների, ներդրումային ֆորումների և անհատական բանակցությունների միջոցով ընտրված ԱԱԿ-ների ներգրավում	ԶՀԳ Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	12.5 մլն ՀՀ դրամ 2014-2015թթ. համար Ֆին. աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե	Շարունակական գործողություն սկսած 2014-ի սեպտեմբերից	Ներդրումային հուշագրեր ԱԱԿ-ների հետ
1.2.3. ԱԱԿ-ների ուղեկցում ներդրումների իրականացման փուլում	ԶՀԳ Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	ՀՀ պետ. բյուջե	Գործողության սկիզբը կախված է ԱԱԿ-ների ներդրումային ծրագրի մեկնարկից	Նոր ԱԱԿ-ների մուտք Հայաստան

* Սույն գործողություններն արդեն ներառված են և հաստատված Դեղագործության և բիոտեխնոլոգիաների գործողությունների ծրագրում և, կրկնահաշվարկի բացառման նպատակով, ֆինանսավորման բյուջեն չի ներառվել սույն գործողությունների ծրագրում:

** Հայաստանում գլոբալ ընկերությունների ՀՈՒՄ կենտրոնների ներգրավման համար թիրախ ընկերությունների նախնական ցանկ է ներկայացված «Ճարտարագիտական նախագծման ոլորտի հետազոտություն և իրագործելիության ուսումնասիրություն» («Տնտեսություն և արժեքներ» կենտրոն, ՁԻՀ) զեկույցում:

ՌՈՒ 1. ԱԱԿ-ՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 1.3. ԱԱԿ-ների հետ տեղական ընկերությունների համագործակցության խթանում*	Հայկական ընկերությունների գլոբալ տեխնոլոգիական ընկերությունների հետ համագործակցություն ՀՈՒՄ պատվերների իրականացման բնագավառում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
1.3.1. Հայկական ընկերությունների գլոբալ տեխնոլոգիական ընկերությունների հետ համագործակցության նպատակն է խթանել ԱԱԿ-ներին ՀՈՒՄ պատվերներ ի տրամադրումը տեղական տեխնոլոգիական ընկերություններին՝ ծախսերի համաֆինանսավորման միջոցով: Նախագծի հայեցակարգի և իրականացման ծրագրի մշակում ներառյալ. • Հայկական ընկերությունների կարողությունների շրջանակի որոշում • Համապատասխան ԱԱԿ-ների նույնականացում • Համաֆինանսավորման սկզբունքների և պայմանների որոշում	ՁԻՀ, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	-	Ծրագրի մշակում 2014 III եռամսյակ Բանակցություններ ԱԱԿ-ների հետ 2015թ. փետրվար	ԱԱԿ-ների հետ հայկական ընկերությունների համագործակցության հաստատված ծրագիր

* Ծրագրի նախատիպ է հանդիսանում Իսրայելում գործող «Global Enterprise Collaboration» ծրագիրը, որն իրականացվում է Իսրայելի արդյունաբերության ՀՈՒՄ կենտրոնը http://www.matimop.org.il/global_enterprise.html:

ՌՈՒ 1. ԱԱԿ-ՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 1.3. ԱԱԿ-ների հետ տեղական ընկերությունների համագործակցության խթանում*	Հայկական ընկերությունների գլոբալ տեխնոլոգիական ընկերությունների հետ համագործակցություն ՀուՄ պատվերների իրականացման բնագավառում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ Ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
1.3.2. Փորձնական ծրագրի իրականացում. • ԱԱԿ-ների պատվերների տեխնիկական առաջադրանքների ներկայացում հայկական ընկերություններին • Հայկական ընկերություններից պատվերների իրականացնողների ընտրություն	ՁԻՀ, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Բյուջե՝ մինչև 40 մլն. ՀՀ դրամ պետական համաֆինանսավորման չափը Ֆինանսավորման աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե	ընկերությունների ընտրություն՝ 2015թ. հունվար-մարտ Նախագծերի իրականացում 2015թ. ապրիլ-հոկտեմբեր	Հայկական ընկերությունների և ԱԱԿ-ների միջև հաջողված համագործակցություն
1.3.3. Մշտապես գործող ամբողջական պետական ծրագրի կազմում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՁՀԳ, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, ՁԻՀ	Ենթակա է գնահատման Ֆինանսավորման աղբյուր՝ ՀՀ պետ. բյուջե	2015թ. դեկտեմբեր	ԱԱԿ-ների ՀուՄ պատվերների ներգրավման խրախուսման մեխանիզմ

ՌՈՒ 2.
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒ 2. ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 2.1. Նորարարական բիզնես նախագծերի բացահայտում	Նորարարական նոր բիզնես գաղափարների, տեխնոլոգիաների առևտրայնացման հնարավորությունների բացահայտում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
2.1.1 «Նորարարական գաղափարների բացահայտման» մրցույթի անցկացում՝ օգտագործելով գիտության, տեխնոլոգիաների, ձեռներեցության ծրագրի՝ STEP-ի մոդելը Մրցույթի առաջին 3 տեղերը գրաված մասնակիցները կստանան դրամական պարգև	ՁԻՀ, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Մինչև 15 մլն. ՀՀ դրամ ՀՀ պետական բյուջե	2015թթ.	Իրագործելի նորարարական բիզնես նախագծերի բացահայտում

ՌՈՒ 2. ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 2.2. Նորարարության համագործակցության դրամաշնորհներ	Վենչուրային ներդրումների պատրաստ բիզնես նախագծերի ապահովում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
2.2.1 «Նորարարության համաֆինանսավորման» դրամաշնորհների տրամադրում հետևյալ նպատակներով. • Հետազոտությունների և մշակումների արդյունքների վերջնականացում և արտադրանքի նախատիպի պատրաստում • Տեխնոլոգիայի բարելավում և վերջնական արտադրանքի ստացում Այս դրամաշնորհների նպատակն է խթանել հայկական ընկերությունների և օտարերկրյա ընկերությունների, ինչպես նաև գիտնականների համագործակցությունը՝ հետազոտությունների արդյունքները վերածելու առևտրային նշանակության արդյունքի: Նախապայման դրամաշնորհ ստացողի կողմից նախագծի ծախսի համաֆինանսավորում 50%-ի չափով Մեկ դրամաշնորհի առավելագույն գումարը 60 մլն ՀՀ դրամ	ՁԻՀ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Մինչև 400 մլն. ՀՀ դրամ «Հայաստանի էլ. հասարակությունը և նորարարությունը մրցունակության խթանման համար» ՀԲ ծրագիր	2013-2015թթ.	Իրագործելի նորարարական բիզնես նախագծերի բացահայտում

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 2.3. Վենչուրային ֆինանսավորում	Գիտատար ընկերությունների կայացում և զարգացում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
2.3.1. ՀԲ ծրագրի շրջանակում վենչուրային հիմնադրամի (ՎՀ) հիմնում, որի նպատակն է ֆինանսական ներդրումների իրականացումը գիտատար սկսնակ ընկերություններում: - Պոտենցիալ ներդրողների և կառավարող ընկերությունների հրավեր - Կառավարող ընկերության և հնարավոր ներդրողների հետ համատեղ պայմանների բանակցում - Կառավարող ընկերության և ներդրողների խմբի ընտրություն - Ներդրումային պայմանների համաձայնագրի կնքում - Հիմնադրամի գրանցում	ՁԻՀ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Համաշխարհային բանկ	2013թ. Մարտ	Գրանցված հիմնադրամ, ընտրված կառավարող ընկերություն, ներդրողների ֆինանսական հանձնառություններ
2.3.2. Ընկերություններում ՎՀ կողմից ներդրումների իրականացում - Ներդրումային գործընթացների իրականացում - Ընկերություններին կառավարման օժանդակություն Նախատեսվում է, որ ՎՀ դուրս կգա ընկերություններից 3-7 տարվա ընթացքում:	Կառավարող ընկերություն	Մինչև 2,490 մլն ՀՀ դրամ Համամասնորեն (50%), մինչև 1,245 մլն. ՀՀ դրամ ՀԲ ծրագիր Մասնավոր ներդրողներ (50%)	2013 – 2021թթ.	Մինչև 20 գիտատար ընկերությունների կայացում և գործունեության ընդլայնում

ՌՈՒ 2. ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 2.4. Մտավոր սեփականության պաշտպանության համակարգի բարելավում	Գիտատար ընկերությունների կայացում և զարգացում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
2.4.1. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նոր նախագծի մշակում և ՀՀ կառավարությանը ներակայացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Ֆինանսավորման աղբյուր՝ ԱՄՆ ՄԶԳ «EDMC ծրագրի» աջակցությամբ	2013թ. դեկտեմբեր	Հեղինակային իրավունքի պաշտպանության կատարելագործված իրավական դաշտ
2.4.2. Խթանել հայկական ընկերությունների (անհատ գյուտարարների) նորարարությունների արտոնագրմանը՝ արտոնագրման ծախսերի համաֆինանսավորման մեխանիզմի մշակման և կիրառման միջոցով	Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Բյուջե՝ 5 մլն. ՀՀ դրամ տարեկան սկսած 2014թ.-ից (պետական համաֆինանսավորման մասնաբաժին) Ֆինանսավորման աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե	Աջակցման մեխանիզմի մշակում՝ 2014թ. մարտ Իրականացում՝ 2014–2015թթ.	Նորարարությունների արդյունքների արտոնագրում

ՌՈՒ 3.

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒ 3. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 3.1. Ներդրումային ծրագրերի երկարաժամկետ ֆինանսավորման սուբսիդավորման մեխանիզմի ապահովում	Ներդրումային ծրագրերի իրագործման խթանում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
3.1.1 ՀՀ արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման կարգի մշակում – Սկզբունքների մշակում • կապիտալ ներդրումներ • արտահանման ուղղվածություն – Կանոնակարգի մշակում • ֆինանսավորման նվազագույն և առավելագույն ծավալների հատկորոշում • այլ – Համապատասխան հստակ մեխանիզմի ստեղծում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, «ՓՄՁ Ներդրումներ» ՈՒՎԿ	-	ժամկետը՝ 2013թ. մարտ	Ընկերությունների արտադրական հզորությունների ընդլայնման ընթացիկ և ապագա ներդրումային ծրագրերի երկարաժամկետ ֆինանսավորման սուբսիդավորման հաստատված կանոնակարգ
3.1.2. ՀՀ արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ապահովում – Հայտերի ընդունում – Հայտերի քննություն – Ֆինանսավորման որոշման կայացում – Ֆինանսավորում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, «ՓՄՁ Ներդրումներ» ՈՒՎԿ	Ֆինանսավորման աղբյուր՝ Արդյունաբերության զարգացման հիմնադրամ Պետական աջակցության ծրագրի շրջանակներում կապահովվի ՓՄՁ ներդրումներ ՈՒՎԿ-ի կողմից տրվող վարկերի տոկոսադրույքի 3%–ի սուբսիդավորումը	Շարունակական գործողություն, ժամկետը՝ 2013թ. մարտ	Ֆինանսավորված ներդրումային ծրագիր

ՌՈՒ 3. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 3.2. Արտահանման ֆինանսավորում	Հայկական ընկերությունների արտահանման խթանում արտահանման ֆինանսավորման հատուկ մեխանիզմի միջոցով

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
3.2.1. Արտահանման ֆինանսավորման մեխանիզմի մշակում (օր.՝ արտահանման պայմանագրերի հիման վրա ֆինանսավորում, ֆակտորինգ) – Միջազգային փորձի ուսումնասիրում – Սկզբունքների և կանոնակարգի մշակում – Համապատասխան հստակ մեխանիզմի ստեղծում	ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ պետ.բյուջե	ժամկետ՝ 2013թ. դեկտեմբեր	Արտահանման ֆինանսավորման հաստատված մեխանիզմ
3.2.2. Արտահանման ֆինանսավորման մեխանիզմի գործարկում – Հայտերի ընդունում – Հայտերի քննություն – Ֆինանսավորման որոշման կայացում – Ֆինանսավորում	ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,	ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ վարկավորման ռեսուրսներ	Շարունակական գործողություն, ժամկետ՝ 2014թ. հունվար	Արտահանման ֆինանսավորման իրականացված ծրագրեր

ՌՈՒ 4.

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՌՈՒ 4. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	**Ակնկալվող արդյունք**
ՌՆ 4.1. Ճարտարագիտական լաբորատորիաների ստեղծման աջակցության ծրագիր	Կրթության և ճարտարագիտական մասնագիտությամբ որակյալ շրջանավարտներ՝ բարելավված կրթության հաշվին

Գործողություն	**Պատասխանատու/ Իրականացնող**	**Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր**	**Ժամկետ**	**Վերջնական/ ընթացիկ արդյունք**
4.1.1. Ազգային ճարտարագիտական լաբորատորիաների «ANEL» հիմնում ՀՊՃՀ-ում Լաբորատորիաների համալիրի ստեղծում Ինտեգրում ճարտարագիտական կրթական ծրագրերում 4.1.1ա. ANEL-ի ծրագրերին աջակցություն	ՁԻՀ, National Instruments, ՀՊՃՀ, դոնոր կազմակերպություններ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	~2,500 մլն ՀՀ դրամ Ֆիզիկական ենթակառուցվածք՝ ՀՀ կառավարություն (ՀՀ ԿԳՆ), ՀՊՃՀ Սարքավորումներ՝ դոնոր կազմակերպություն Վերապատրաստում և ծրագրերի տրամադրում՝ National Instruments, Կրթական ծրագրերի և կարողությունների զարգացման աջակցություն	Լաբորատորիաների հիմնում մինչև 2013թ. դեկտեմբեր Կրթական ծրագրերի գործարկում սկսած 2014թ. հունվարից	Գործող գիտակրթական ճարտարագիտական լաբորատորիաների համալիր ՀՊՃՀ-ում
4.1.2. Ճարտարագիտության բնագավառում գործող ընկերությունների և կրթական հաստատությունների համատեղ (ներառյալ նախնական միջին մասնագիտական և բարձրագույն կրթական հաստատություններ) կրթական ծրագրերի իրականացման աջակցություն*	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, կրթական հաստատություններ Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Բյուջե՝ 40 մլն. ՀՀ դրամ Ենթադրում է առավելագույնը 50% պետության կողմից համաֆինանսավորում Ֆինանսավորման մնացյալ մասն իրականացվելու է մասնակից ընկերությունների և կրթական հաստատությունների կողմից	2013-2015թթ.	Աջակցություն ոլորտի կրթական ծրագրերին

*Սույն գործողությանը կարող է համալրել Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում ստեղծված է Նորարարությունների մրցակցային հիմնադրամը (ՆՄՀ): ՆՄՀ-ն բարձրագույն կրթության ոլորտում նորարարությունները խթանող մեխանիզմ է, որի միջոցով մրցակցային հիմունքներով դրամաշնորհներ կտրամադրվեն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում նորարարական ու զարգացման ծրագրերի իրականացման և բուհերի կարողությունների հզորացման նպատակով:

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 4.2. Տեխնոլոգիական սկսնակ ընկերությունների բիզնես ինկուբացիոն կենտրոնի հիմնման ծրագրի մշակում	Տեխնոլոգիական սկսնակ ընկերությունների բիզնես ինկուբացիոն կենտրոնի հիմնման ծրագիր

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ Ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
4.2.1 Տեխնոլոգիական սկսնակ ընկերությունների բիզնես ինկուբացիոն կենտրոնի հիմնման ծրագրի մշակում:	ՁԻՀ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Ծրագրի բյուջեն կհստակեցվի ծրագրի կազմումից հետո	2014թ. դեկտեմբեր	Տեխնոլոգիական սկսնակ ընկերությունների բիզնես ինկուբացիոն կենտրոնի հիմնման ծրագրի ներկայացում ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհուրդ

ՌՈՒ 4. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 4.3. Տեխնոլոգիական կենտրոնների հիմնում մարզերում	Մարզերում նորաստեղծ տեխնոլոգիական ընկերությունների թվաքանակի աճ և նոր աշխատատեղերի ստեղծում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
4.3.1. Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի կառուցում	ՁԻՀ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	~2,200 մլն ՀՀ դրամ «Հայաստանի էլ. հասարակությունը և նորարարությունը մրցունակության խթանման համար» ՀԲ ծրագիր	Կառուցում՝ 2012թ հունիս – 2013թ. դեկտեմբեր	Նախնական հայեցակարգի դրույթներին համապատասխան գործող տեխնոլոգիական կենտրոն Ընդհանուր տարածք՝ 6000 ք.մ որից վարձակալությամբ տրվող տարածք 2000 ք.մ.
4.3.2. Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի գործարկում • Ինկուբացիոն և կրթական ծրագրերի իրականացում • Տեխնոլոգիական ընկերությունների ներգրավում • Գլոբալ ընկերությունների հետազոտական կենտրոնների/ լաբորատորիաների ներգրավում	ՁԻՀ, ԳՏԶՀ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Կարողությունների զարգացում՝ ~41 մլն. ՀՀ դրամ ՀԲ ծրագրի շրջանակում	Սկսած 2014թ. հունվարից	Վերապատրաստման ծրագրերի իրականացում Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնում գործող սկսնակ ընկերություններ Աշխատատեղերի աճ

ՌՈՒ 4. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 4.3. Տեխնոլոգիական կենտրոնների հիմնում մարզերում	Մարզերում նորաստեղծ տեխնոլոգիական ընկերությունների թվաքանակի աճ և նոր աշխատատեղերի ստեղծում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
4.3.3. Տեխնոլոգիական կենտրոնի կառուցում և գործարկում Լոռու մարզում Նախնական ընտրություն Վանաձորում՝ ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի տարածք	ՁԻՀ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղ	Բյուջե՝ 1,600 մլն ՀՀ դրամ (նախնական գնահատական) Ֆինանսավորման հնարավոր աղբյուր՝ «Հայաստանի էլ. հասարակությունը և նորարարությունը մրցունակության խթանման համար» ՀԲ ծրագիր Կրթական ծրագրերի աջակցություն՝ ԱՄՆ ՄԶԳ «EDMC ծրագիր»	Կառուցում՝ 2015թ. դեկտեմբեր	Վերանորոգված և կահավորված գրասենյակային տարածքներ տեխնոլոգիական սկսնակ ընկերությունների համար Ընդհանուր տարածք՝ Վանաձոր՝ ~2,400 ք.մ. Բիզնես ինկուբացիոն ծրագրեր Նորաստեղծ տեխնոլոգիական ընկերություններ և նոր աշխատատեղեր

ՌՈՒ 4. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 4.4 Ճարտարագիտության ոլորտում ԱրմԵՆ-ների (Armenian Executive Network*) ցանցի ստեղծում	Ցանցի ռեսուրսների օգտագործում ներդրումների ներգրավման, փորձի փոխանակման, սկսնակ ընկերությունների աջակցության նպատակով

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
4.4.1. 1. Ճարտարագիտության ոլորտում Սփյուռքից հայ մասնագետների, գլոբալ ընկերություններում աշխատող կառավարիչների և ծրագրին մասնակից հայկական ընկերությունների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում (տվյալների բազայի համապատասխան ծրագրային ապահովման փաթեթով) 2. Մասնակից հայկական ընկերությունների և ԱրմԵՆ-ների նույնականացում* 3. Ինտերնետային պորտալի ստեղծում, որպես մասնակիցների միջև տեղեկատվության փոխանակման և համագործակցության հիմնական հարթակ	Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ սփյուռքի նախարարություն, ԶՀԳ	Բյուջե՝ 10 մլն. ՀՀ դրամ Ֆինանսավորման աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե Դոնոր կազմակերպություն (հնարավոր աջակցող կազմակերպություն՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն)	2014թ. դեկտեմբեր	ԱրմԵՆ-ների տվյալների բազա Նույնականացված մասնակիցներ Գործարկված ինտերնետային պորտալ մասնակիցների մասնավոր տարածքով

* ԱրմԵՆ-ների ցանցի հայեցակարգը ներկայացված է «Սփյուռքի հետ կապված ՕՈՒՆ իրավիճակի ուսումնասիրության» հաշվետվության մեջ, որն իրականացվել է «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության կողմից Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության պատվերով:

Ռազմավարական նախաձեռնության անվանում	**Ակնկալվող արդյունք**
ՌՆ 4.4 Ճարտարագիտության ոլորտում ԱրմԵՆ-ների (Armenian Executive Network) ցանցի ստեղծում	Ցանցի ռեսուրսների օգտագործում ներդրումների ներգրավման, փորձի փոխանակման, սկսնակ ընկերությունների աջակցության նպատակով

Գործողություն	**Պատասխանատու/ Իրականացնող**	**Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր**	**Ժամկետ**	**Վերջնական/ ընթացիկ արդյունք**
4.4.2. Ծրագրի մեկնարկ Փորձնական փուլ Առնվազն – 10 ընկերությունների մասնակցություն 1. Մեկնարկային հանդիպումներ – ծանոթացում, խնդիրների նույնականացում և ձևակերպում 2. ԱրմԵՆ-ի և տեղական ընկերության միջև համագործակցություն 3. Արդյունքների գնահատում	Արդյունաբերության զարգացման հիմնադրամ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ սփյուռքի նախարարություն, ԶՀԳ	Բյուջե՝ ~26 մլն. ՀՀ դրամ Ֆինանսավորման աղբյուր՝ Դոնոր կազմակերպություն (հնարավոր աջակցող կազմակերպություն՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն)	Փորձնական փուլի մեկնարկ՝ 2015թ. մարտ Արդյունքների ամփոփում՝ 2015թ. դեկտեմբեր	Հայկական ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացում, կապեր արտաքին շուկաների հետ, առավել պրոֆեսիոնալ կառավարում և այլն

ՌՈՒ 4. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 4.5. «ArmRobotics» ծրագրի իրականացում	Դպրոցականների մոտ դեպի ճարտարագիտական մասնագիտություններ հակվածության աճ, որի արդյունքում կաճի ճարտարագիտական մասնագիտությունների դիմորդների թվաքանակը

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
4.5.1. Ռոբոտիկայի բնագավառում աշխատանքների ամենամյա մրցույթի և ցուցադրությունների կազմակերպում	ԻՏԶՄ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Դոնոր կազմակերպություններ, հովանավորներ, ՀՀ կառավարություն	Ամենամյա	Ամենամյա ցուցահանդեսի կազմակերպում
4.5.2. Ռոբոտիկայի բնագավառում ուսումնական ծրագրերի իրագործում՝ - Դպրոցներում ռոբոտիկայի խմբակների ստեղծում (ներառյալ ուսուցիչների վերապատրաստում) - Դպրոցներին անհրաժեշտ ռեսուրսների՝ ռոբոտ-կոնստրուկտորների մատակարարում	ԻՏԶՄ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Դոնոր կազմակերպություններ, հովանավորներ, ՀՀ կառավարություն	2012-2015թթ. Ընթացքում	Մինչև 600 դպրոցներում գործող ռոբոտիկայի խմբակներ
4.5.3. Ռոբոտիկայի սիրողական ակումբի ստեղծում, որը կհանդիսանա պլատֆորմ՝ այս ուղղությամբ հետաքրքրված մասնագետների համագործակցության համար	ԻՏԶՄ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Դոնոր կազմակերպություններ, հովանավորներ, ՀՀ կառավարություն	Պարբերական գործողություն	Գործող ակումբ

ՌՈՒ 5.
ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

ՌՈՒ 5. ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 5.1. Արտաքին շուկաների մասին տեղեկատվության և գործարար կապերի հաստատման աջակցություն	Արտաքին շուկաներում բիզնես կապերի ընդլայնում և արտահանման ծավալների աճ

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
5.1.1. Շուկաների մասին տեղեկացվածության և խորհրդատվության ապահովում -Շուկայի միտումների և մուտքի անհրաժեշտ պայմանների վերաբերյալ վերլուծությունների իրականացում կամ ձեռքբերում, վաճառքի մոդելի մշակում (գրասենյակի տեղակայության որոշում և այլն): (Նշում՝ որպես աղբյուր կդիտվի Euromonitor International (Passport GMID) միջազգային մակարդակով պարբերական թարմացվող տեղեկատվական վերլուծական շտեմարանը)	ԶՀԳ, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	ՀՀ պետական բյուջե Տես՝ կոնյակագործության գործողությունների ծրագրի 2.1.1 կետը	Պարբերական գործողություն, սկիզբը՝ 2014թ.	Արտահանող ընկերությունների շուկաների վերաբերյալ ուսումնասիրություններ

ՌՈՒ 5. ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 5.1. Արտաքին շուկաների մասին տեղեկատվության և գործարար կապերի հաստատման աջակցություն	Արտաքին շուկաներում բիզնես կապերի ընդլայնում և արտահանման ծավալների աճ

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
5.1.2. Ոլորտի առաջմղման ներկայացուցչական և տեղեկատվական նյութերի պատրաստում և հրապարակում	Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	ՀՀ պետական բյուջե Ըստ ներկայացուցչական և տեղեկատավական նյութերի պատրաստման ու հրապարակման ֆինանսավոման կարիքի	Շարունակական գործողություն, սկիզբը՝ 2014թ.	Ոլորտի արդյունավետ առաջմղման գործունեություն

ՌՈՒ 5. ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 5.2. Մասնագիտացված միջազգային ցուցահանդեսների մասնակցության աջակցություն	Արտաքին շուկաներում բիզնես կապերի ընդլայնում և արտահանման ծավալների աճ

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
5.2.1. Միջազգային մասնագիտացված ցուցահանդեսներին մասնակցություն՝ այդ թվում նեղ մասնագիտական ցուցահանդեսներին անհատական մասնակցությանն աջակցություն	ԶՀԳ, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Բյուջե՝ 20 մլն. ՀՀ դրամ տարեկան (պետական համաֆինանսավորման մասը) Ֆինանսավորման աղբյուր՝ Արդյունաբերության զարգացման հիմնադրամ Ոլորտի ընկերություններ, Որպես ընդհանուր սկզբունք աղբյուր՝ 50% - Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, 50% - մասնակից ընկերություններ	Մեկնարկ՝ 2013թ.	Ցուցահանդեսների մասնակցության արդյունքում համագործակցության հիմնում նպատակային շուկաներում և արտահանման աճ

ՌՈՒ 5. ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 5.3. Տեղական շուկայում վաճառքների խթանում	Ճարտարագիտական ընկերությունների վաճառքների աճ ներքին շուկայում, նոր արտադրանքների ներդրման հնարավորությունների ընդլայնում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ Ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
5.3.1. Տեղական ճարտարագիտական ընկերությունների արտադրանքների գնումների խրախուսում պետական մարմինների կողմից Հայկական արտադրատեսակների ներկայացում պետական մարմինների ներկայացուցիչների համար (ինչպես նաև շնորհանդեսների կազմակերպում)	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՓՄՁ ԶԱԿ	ՀՀ պետական բյուջե, որը կգնահատվի ըստ միջոցառման ֆինանսավորման կարիքի	Շարունակական սկսած 2013թ.	Պետական գնումներում հայկական արտադրողների մասնակցության աճ

ՌՈՒ 5. ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 5.4. Հայկական արտադրանքի միջազգային հավաստագրման աջակցություն	Հայկական արտադրանքի միջազգային մրցունակության բարձրացում միջազգային հավաստագրման աջակցության միջոցով

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ Ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
5.4.1. Տեղական ճարտարագիտական ընկերությունների արտադրանքների միջազգային հավաստագրման ծախսերի համաֆինանսավորում • Մեխանիզմի մշակում • Համաֆինանսավարման դրամաշնորհների տրամադրում	Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Բյուջե՝ 40 մլն. ՀՀ դրամ Ենթադրում է առավելագույնը 50% պետության կողմից համաֆինանսավորում Ֆինանսավորման մնացյալ մասը իրականացվելու է մասնակից ընկերությունների կողմից	Մեխանիզմի մշակում՝ 2013թ. հուլիս Մեխանիզմի գործարկում՝ 2014թ.	Միջազգային հավաստագրում ստացած ապրանքներ

ՌՈՒ 6.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՌՈՒ 6. ԱՏԳ* ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 6.1. Ոլորտին առնչվող իրավական դաշտի կատարելագործում	Հայկական արտադրանքի գնային մրցունակության աճ

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
6.1.1. Ոլորտի հետ քննարկել և և մշակել ոլորտին առնչվող իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված առաջարկություններ	ՀՀ էկոնամիկայի նախարարություն, ԶՀԳ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ ԿԱ ՊԵԿ	-	2014 սեպտեմբեր	Առաջարկությունների ներկայացում ՀՀ վարչապետին Արդյունաբերական խորհուրդ

*Արտաքին տնտեսական գործունեություն

Ռազմավարական նախաձեռնության անվանում	**Ակնկալվող արդյունք**
ՌՆ 6.2. Երկակի նշանակության ապրանքների արտաքին առևտրի կանոնակարգման բեռի թեթևացում	Հայկական արտադրանքի արտահանման ընթացակարգերի հեշտացում

Գործողություն	**Պատասխանատու/ Իրականացնող**	**Բյուջե/ Ֆինանսավորման աղբյուր**	**Ժամկետ**	**Վերջնական/ ընթացիկ արդյունք**
6.2.1. Ուսումնասիրել երկակի նշանակության ապրանքների առևտրի կանոնակարգման բեռի թեթևացման հնարավորությունները և կատարել համապատասխան փոփոխություններ իրավական ակտերում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Ուսումնասիրություն	2012 թ. նոյեմբեր - 2013թ. մայիս	Արտադրողների ծախսերի և ժամանակի խնայողություն